

**Հովսեփ Ի. Աղաջանյան**

*Տնտ. գիտ. դոկտոր*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԻՉՄԻ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԸ**

**Հասարակական-տնտեսական ֆորմացիաների  
մարքայան տեսության քննադատություն\***

**Բանալի բառեր** - արտադրողական ուժեր, արտադրական հարաբերություններ, հասարակական-տնտեսական ֆորմացիա, բազիս, վերնաշենք, սեփականություն, քաղաքակրթություն:

**Մուտք**

Ականավոր տնտեսագետ Մ. Բլաուզը, վերլուծելով Կ. Մարքսի տնտեսագիտական ուսմունքը, գրում է. «Մարքսը գերազնահատվել է, վերանայվել, հերքվել, նրան թաղել են հազարավոր անգամներ, բայց նա ամեն անգամ դիմադրել է, երբ փորձել են նրան ուղարկել մտավոր անցյալի գիրկը... Ոչ ոք ներկայումս չի պայքարում Ադամ Սմիթի կամ Ռիկարդոյի համար, բայց դեռևս բարձրանում է ոմանց արյան ճնշումը, հենց որ Մարքսը դառնում է ուսումնասիրության առարկա»<sup>1</sup>:

Մարքսը ստեղծել է հակասություններով լի մի ուսմունք: Նրա տեսության վերաբերյալ կան բազմաթիվ վերլուծություններ, որոնց հեղինակները փորձել են պարզել իրականության հետ դրա փոխառնչության հիմնահարցերը: Սակայն հետազոտողներն ամեն անգամ բախվել են մարքսիզմի ուսմունքի չափից ավելի համակարգվածության հզոր պատնեշին: Այդ ուսմունքի հիմնական դրույթները հետագայում ենթարկվել են սուր քննադատության, և պատմության օրինաչափությունների ու տնտեսական երևույթների վերաբերյալ նրա տեսակետները կասկածի տակ են դրվել: Չնայած դրան՝ Մարքսի ուսմունքը մեծ ազդեցություն է ունեցել հասարակական օրինաչափությունների բացահայտմամբ զբաղվող հետազոտող ուսումնասիրողների վրա:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.12.2019:  
1 Блауг М., Экономическая мысль в ретроспективе, М., 1994, с. 207.

*Վե՛ր համահայկական հանդես, ԺԱ (ԺԷ) տարի, թիվ 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019*

Կենսագիրները նշում են Մարքսի բացառիկ օժտվածության մասին, որը դրսևորվել է դեռևս ուսանողական տարիներին: Բռննի, այնուհետև Բեռլինի համալսարաններում ուսանելով իրավաբանություն, փիլիսոփայություն և պատմություն՝ նա հետագայում գրեթե ամբողջությամբ նվիրվել է տնտեսագիտությանը և կենդանության օրոք լույս ընծայել իր հիմնական «Կապիտալ» աշխատության առաջին հատորը: Մինչև այս հատորի լույս ընծայումը արդեն ձևավորվել էր Մարքսի աշխարհայացքը հասարակական գործընթացների օրինաչափությունների վերաբերյալ, որի հիմքի վրա էլ ստեղծվել է մարքսյան ուսմունքը: Այս առումով նրա կախարհը հետազոտություններից է «Օտարված աշխատանք»<sup>2</sup> հրապարակումը, որը զետեղված է «1844 թ. տնտեսափիլիսոփայական ձեռագրերում»: Հարկ ենք համարում նշել, որ Մարքսն այդ ժամանակ ընդամենը 26 տարեկան էր: Այսինքն՝ բավականին երիտասարդ հասակում է ձևավորվել նրա աշխարհայացքը կամ ընկալումների համակարգը դառնալով մարքսյան ուսմունքի հիմքը: Վերոնշյալ աշխատության մեջ Մարքսը հանգում է այն եզրակացության, որ մրցակցության անհրաժեշտ արդյունքը կապիտալի կուտակումն է փոքրաթիվ մարդկանց ձեռքում, այսինքն՝ մենաշնորհի՝ ավելի սոսկալի ձևով վերականգնումը, երբ «...ի վերջո վերանում է տարբերությունը կապիտալիստի և հողային ռանտյեի, հողագործի և արդյունաբերական բանվորի միջև, և ողջ հասարակությունն անխուսափելիորեն տրոհվում է երկու դասակարգի՝ **սեփականատերերի** և սեփականությունից զուրկ **բանվորների**»<sup>3</sup>: Ըստ Մարքսի՝ այդ երկու հակամարտ դասակարգերի՝ սեփականատեր կապիտալիստների և սեփականությունից զուրկ բանվորների հարաբերությունների հիմքի վրա է կառուցված «կապիտալիստական» հասարակարգը: Այդ փոխհարաբերությանը բնորոշ է աշխատանքի օտարումը, որը նշանակում է. «Առաջին՝ բանվորի հարաբերությունն **աշխատանքի արդյունքի**՝ որպես օտարի և իր վրա իշխողի հանդեպ: ...Երկրորդ՝ աշխատանքի վերաբերմունքը **արտադրական գործողության** հանդեպ բուն աշխատանքի գործընթացում: Դա բանվորի վերաբերմունքն է իր սեփական գործունեության՝ որպես ինչ-որ օտարի, իրեն չպատկանողի նկատմամբ»<sup>4</sup>: Փաստորեն, Մարքսը նկատի ունի այն, որ աշխատողի ստեղծած բարիքն օտարված է նրանից և պատկանում է մասնավոր սեփականատիրոջը՝ կապիտալիստին: Նա գրում է. «...չնայած մասնավոր սեփականությունը հանդես է գալիս որպես աշխատանքի օտարման հիմք և պատճառ, այն իրականում, հակառակը, դառնում է նրա հետևանքը: ...պարզվում է՝ մասնավոր սեփականությունը մի կողմից օտարված աշխատանքի **արդյունքն է**, իսկ մյուս կողմից՝ դրա օտար-

2 Маркс К. и Энгельс Ф., Сочинения, т. 42, М., 1972, с. 86-99.

3 Նույն տեղում, էջ 86:

4 Նույն տեղում, էջ 91:

ման միջոցը, այդ օտարման իրացումը (ընդգծումները հեղինակինն են - Հ. Ա.)»<sup>5</sup>: Սա նշանակում է՝ արտադրության միջոցներից զուրկ բանվորներին շահագործում են մասնավոր սեփականատերերը, որոնք յուրացնում են նրանց ստեղծած բարիքները: Մարքսը մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց նման մոտեցմանը և իր հետագա աշխատանքներում, հատկապես՝ «Կապիտալ»-ում, փորձեց գիտականորեն հիմնավորել այս թեզի ճշմարտացիությունը:

### 1. Պատմության մարքսյան ընկալումը

Մարքսը և Էնգելսը փորձել են բացահայտել հասարակության զարգացման օրինաչափությունների, սեփականության ձևերի, դասակարգերի, պետության, շահագործման ծագման պատճառները: Այդ հիմքի վրա նրանք ստեղծել են **հասարակական-տնտեսական ֆորմացիաների տեսությունը**<sup>6</sup>՝ ըստ այդմ փորձելով բացահայտել հասարակության զարգացման օրինաչափությունների տրամաբանությունը: Մարքսիզմն արտադրական հարաբերությունների բնույթը բացատրում է սեփականության ձևերի փոփոխությամբ, որը պայմանավորված է, այսպես կոչված, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքի գործողությամբ: Այդ ուսմունքը սեփականության ձևերի կերպափոխման հիմքի վրա է փորձում բացատրել արտադրական հարաբերությունների բնույթը: Մարքսիզմի տեսանկյունից՝ խնդիրը շատ պարզ է. մասնավոր սեփականատիրական հարաբերությունների պայմաններում անխուսափելի է մարդու կողմից մարդու շահագործումը, որի վերացման միակ ճանապարհը համայնական (հասարակական) սեփականության հաստատումն է: Ըստ այդ տրամաբանության՝ Մարքսը և Էնգելսը հասարակության զարգացման պատմությունը ներկայացնում են որպես նախնադարյան համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և ապագա կոմունիստական հասարակարգերի հաջորդականություն:

Ըստ մարքսիզմի՝ «Հասարակական տնտեսական ֆորմացիան պատմական զարգացման որոշակի աստիճանի վրա գտնվող կոնկրետ հասարակություն է, որին յուրահատուկ է արտադրության այս կամ այն եղանակը, ինչպես նաև հասարակական գիտակցության ձևերի այն ամբողջությունը, որ գոյություն ունի տվյալ ժամանակաշրջանում»<sup>6</sup>: Ֆորմացիաների բնույթի և դրանց տրամաբանական հաջորդականության հիմքում, այսպես կոչված, **բազիսի և վերնաշենքի** փոխհարաբերությունն է: Մարքսի կարծիքով՝ «Իրենց կյանքի հասարակական արտադրության ժամանակ մարդիկ մտնում են որոշակի, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հա-

Վեմ համահայկական հանդես, ԺԱ (ԺԷ) տարի, թիվ 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019

5 Նույն տեղում, էջ 97:  
6 «Մարքսիստական փիլիսոփայության հիմունքները», Եր., 1966, էջ 8:

րաբերությունների՝ արտադրական հարաբերությունների մեջ, որոնք համապատասխանում են իրենց նյութական արտադրողական ուժերի զարգացման որոշակի աստիճանին: Այդ արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է հասարակական-տնտեսական կառուցվածքը, այն իրական բազիսը, որի վրա բարձրանում է իրավական և քաղաքական վերնաշենքը, և որին համապատասխանում են հասարակական գիտակցության որոշ ձևեր»<sup>7</sup>: Ըստ այդմ՝ «Բազիսը հասարակական արտադրական հարաբերությունների կամ մարդկանց, դասակարգերի տնտեսական հարաբերությունների ամբողջությունն է»<sup>8</sup>, իսկ ահա «վերնաշենքը տվյալ հասարակարգի իրավաքաղաքական և գաղափարական հարաբերությունների ամբողջությունն է»<sup>9</sup>, որը ներառում է հասարակական գիտակցության ձևերը՝ «իրավաքաղաքական հայացքները, կրոնը, բարոյականությունը, գիտությունը, արվեստը, փիլիսոփայությունը և այլն»<sup>10</sup>: Այսինքն՝ Մարքսի ուսմունքի հիմքը **տնտեսական դետերմինիզմն է**:

Բազիսը տնտեսակարգն է, որի հիմքում սեփականատիրական հարաբերություններն են, որոնք էլ պայմանավորում են ունեցվածքի բաշխման, դասակարգերի և սոցիալական խմբերի ձևավորման և դրանց միջև առկա տնտեսական հարաբերությունների բնույթը: Բազիսի բնույթին համապատասխան ձևավորվում է վերնաշենքը, այսինքն՝ իրավա-քաղաքական համակարգը: Սեփականատիրական հարաբերությունների վրա կառուցված բազիսը ենթակա է փոփոխության, որը հասարակական առաջընթացի հիմքն է: Մարքսիզմն այդ տրամաբանությամբ է դիտարկում հասարակական-տնտեսական ֆորմացիաների փոփոխության ընթացքը: Դա տեղի է ունենում սեփականատիրական հարաբերությունների փոփոխությամբ՝ պայմանավորված արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հակասությամբ, որի լուծման ճանապարհը մարքսիզմը համարում է սեփականության մի ձևի փոխարինումը մյուսով: Դրա արդյունքում ձևավորվում են նոր արտադրական հարաբերություններ, այսինքն՝ տեղի է ունենում բազիսի, հետևապես վերնաշենքի փոփոխություն: Այս մոտեցմամբ մարքսիզմը բացահայտեց արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքը՝ որպես հասարակության առաջընթացի հիմնական օրինաչափություն: «Իմ տեսակետն այն է,- գրում է Մարքսը,-որ ես հասարակական-տնտեսական ֆորմացիայի զարգացմանը նայում եմ իբրև բնապատմական գործընթաց»<sup>11</sup>:

7 **Մարքս Կ.**, Քաղաքատնտեսության ըննադատության շուրջ, Կարլ Մարքս և Ֆրիդրիխ Էնգելս, Ընտիր երկեր 3 հատորով, հատ. 1, Եր., 1972, էջ 689:

8 «Մարքսիստական փիլիսոփայության հիմունքները», Եր., 1966, էջ 237:

9 Նույն տեղում, էջ 240:

10 Նույն տեղում:

11 **Մարքս Կ.**, Կապիտալ, հատ.1, Եր., 1954, էջ 8:

Մարքսիստական հասարակական-տնտեսական ֆորմացիաների և հասարակության առաջընթացի շարժիչ ուժերի տեսությունը որոշակի պարզաբանման կարիք ունի: Ըստ Մարքսի՝ արտադրողական ուժերը ներառում են աշխատանքի գործիքները, առարկաները և աշխատուժը, իսկ արտադրական հարաբերությունները տնտեսական գործունեության ընթացքում ձևավորված փոխհարաբերություններն են: Տնտեսական գործունեության ընթացքում մարդն անընդհատ կատարելագործում է արտադրողական ուժերը, մի կողմից ձեռք բերելով նոր հմտություններ, մեծացնելով փորձառությունը, խորացնելով գիտելիքներն ու իմացությունը, մյուս կողմից անընդհատ կատարելագործելով աշխատանքի գործիքները՝ բարձրացնում է աշխատանքի արտադրողականության, հետևապես՝ իր կյանքի պայմանների ու բարեկեցության մակարդակը: Սա համընդհանուր և բոլորին հայտնի ճշմարտություն է, որը, բնականաբար, ընդունելի է նաև մարքսիզմի կողմից: Սակայն ի՞նչ ասել է՝ «մարդիկ, իրենց կամքից անկախ, մտնում են որոշակի արտադրական հարաբերությունների մեջ»: Չէ՞ որ իրականում նրանք են ձևավորում այդ հարաբերությունները՝ դառնալով դրանց կրողները ու գործելով ըստ իրենց կամքի: Այդ հարաբերություններն ունեն շարունակական բնույթ՝ անընդհատ գտնվելով բարդ ու հակասական կերպափոխումների մեջ, որոնք պայմանավորված են քաղաքակրթական բարդ գործընթացներով: Այնինչ Մարքսը մարդուն դիտարկում է որպես ինչ-որ վերացական «արտադրական հարաբերությունների» պարզունակ պտուտակ:

Ն. Բերդյաևը, քննադատելով մարքսիզմը, գրում է. «...Եթե մարդուն դիտում են բացառապես իբրև աղյուս հասարակաշինության համար, երբ նա լոկ միջոց է տնտեսական գործընթացի համար, ապա հարկ է խոսել ոչ այնքան նոր մարդու երևույթի, որքան մարդու անհետացման, այսինքն՝ ապամարդկայնացման գործընթացի խորացման մասին...»<sup>12</sup>: Այս առիթով Ռ. Սարինյանը գրում է. «Կ. Մարքսի տնտեսական ուսմունքում հասարակական կյանքի բոլոր շարժումները քննարկվում են տնտեսական գործոնի տեսանկյունից՝ այն դիտելով մեկնակետային: Ոչ միայն չեն ուսումնասիրվել մյուս գործոնների հետ տնտեսական գործոնի փոխներգործության կապերը, այլև դրանց ինքնուրույնության հարցը, ինչի հետևանքով տնտեսական գործոնը բացարձականացվել և դարձել է նախապաշարմունք»<sup>13</sup>:

Փաստորեն, Մարքսը, ըստ էության, փորձում է հասարակական բարդ գործընթացները ներկայացնել իրականությունից կտրված՝ վերացական, արտաքին դրսևորումներով պայմանավորված սխեմաներով: Օ. ֆոն Բյոմ-Բավերկի կարծիքով՝ «Հասարակական գիտությունների պատմության մեջ Մարքսի համար հաստատուն տեղ

12 Бердяев Н., Истоки и смысл русского коммунизма, «Юность» журнал, М., 1989, N 11, с. 92.  
 13 Սարինյան Ռ., Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր., 2005, էջ 76:

է ապահովված նույն հիմունքներով և դրական ու բացասական արժանիքների նույն միախառնումով, ինչ որ նրա նախատիպի՝ Հեգելի համար: Երկուսն էլ անձամբ հանճարեղ մտածողներ էին: Երկուսն էլ, ամեն մեկը՝ իր ասպարեզում, հսկայական ազդեցություն են ձեռք բերել բազմաթիվ սերունդների մտածողության և զգացմունքների վրա, անգամ կարելի է ասել՝ հենց ժամանակի ոգու վրա: Սակայն նրանցից յուրաքանչյուրի տեսական ստեղծագործությունը եղել է գերագույն չափով վարպետորեն հղացված, համակցման հեքիաթային ուժի միջոցով մտքերի անթիվ հարկաբաժիններով կառուցված, մտքի զարմանալի ուժի՝ որպես հենարանի վրա պահվող խաղաթղթե տուն»<sup>14</sup>:

Բնական է, որ նման մոտեցմամբ Մարքսը պետք է հասարակական բարդ հարաբերություններից «դուրս թողներ» հիմնական դերակատարին՝ **մարդուն**: Գ. Հեգելի կարծիքով՝ «Պատմության ողջ վերլուծությունը մեզ ապացուցում է, որ մարդկանց գործունեությունը բխում է նրանց պահանջմունքներից, կրքերից, շահերից, խառնվածքից, ունակություններից և ընդամին այնպես, որ այդ դրամայում խթանող շարժառիթը հենց պահանջմունքներն են, կրքերը, շահերը, և միայն դրանք են կարևոր դեր խաղում»<sup>15</sup>: Այսինքն՝ մարդու գործունեության առանցքում և հիմքում պահանջմունքներն են, որոնք կանխորոշել են նաև արտադրական հարաբերությունների բնույթը և ոչ թե հակառակը: Հետևապես պահանջմունքները գործունեության առաջին ազդակն են, իսկ արտադրական հարաբերություններն ուղղված են դրանց բավարարմանը: Իսկ բռնությունը և հարկադրանքը, որոնք մարքսիզմն անվանում է մարդու կողմից մարդու շահագործում, պայմանավորված են բազմաթիվ սոցիալ-հոգեբանական, քաղաքակրթական բարդ գործընթացներով, որոնց նա, ըստ էության, չի անդրադառնում:

Մարդու՝ որպես բնական էակի էությունը իմաստավորվում է նրա հոգևոր-ստեղծագործական ունակություններով: Հասարակական բարդ գործընթացների ուսումնասիրության ժամանակ դա պետք է ընդունել որպես հիմք: Սակայն քանի որ Մարքսը դրանք դիտարկում է գլխիվայր, ուստի հոգևոր ոլորտը, իր ներկայացմամբ՝ վերնաշենքը, համարում է ածանցյալ բազիսի, այսինքն՝ արտադրական հարաբերությունների (նյութականի) նկատմամբ: Հասարակության հազարամյա պատմությունը, անկախ դրա տարբեր փուլերի հակասական դրսևորումներից, որոնք առանձին ուսումնասիրության նյութ են, պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն, որի կերտողը և կրողը **ՄԱՐԴՆ** է: Մարդկության պատմության հակասական փուլերի միջև տրամաբանական շղթան կառուցված է ըստ այդ նույն **ՄԱՐԴՈՒ** էության տարբեր դրսևորումների: Սա անհերքելի ճշմարտություն է:

14 **Бем-Баверк О.**, Теория Карла Маркса и ее критика, М.,СПБ, 1897, с. 126-127.  
15 **Гегель Г.**, Философия истории, «Сочинения», т.VIII, М.-Л., 1935, с. 20.

Մինչդեռ մարքսիզմն անհասկանալիորեն հասարակության պատմության միասնական շղթան, ըստ ֆորմացիաների տեսության, բաժանում է առանձին մասերի, որոնք միմյանց կապում է, այսպես կոչված, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանության մտացածին օրենքի գործողությամբ: Իրականում, ձևավորված ինստիտուցիոնալ համակարգը ներկայացնելով որպես բազիսի և վերնաշենքի վերացական փոխհարաբերություն, նա **ՄԱՐԴՈՒՆ**, այսինքն՝ դրա կրողին, դիտարկում է որպես միջոց: Այս առումով հենց այդ **մարդն է**, որ, անընդհատ ձեռք բերելով գիտելիքներ և հմտություններ, կատարելագործում է արտադրության գործիքները, այսինքն՝ արտադրողական ուժերը, ինչը հոգևոր-ստեղծագործական ընթացք է և ժառանգականության, շարունակականության սկզբունքով ու պատմական հիշողությամբ սերտորեն կապված է նախորդ իրադարձությունների հետ: Այդ հավերժ շղթան ո՛չ սկիզբ ունի և ո՛չ էլ վերջ, և «որտեղի՞ց ենք գալիս, ո՞ր ենք գնում» հարցի պատասխանը հնարավոր չէ գտնել պատմություն կերտողից՝ **մարդուց**, այսինքն՝ ի վերջո **հոգևորից** դուրս:

Հոգևորի ճանաչողության առումով Մ. Օվսյանիկովը, անդրադառնալով Գ. Հեգելի «Ոգու ֆենոմենոլոգիա» աշխատությանը, գրում է. «Հեգելը հետամուտ է ճանաչողության ուղուն՝ անմիջական զգայական ընկալումից դեպի գիտական, իրականության բանական լինելու ճանաչողություն... Այդ շարժման ելակետն անհատի սովորական բնական գիտակցությունն է, երբ վերջինս դեռ ձեռք չի բերել գիտական ճանաչողություն իրականության մասին: Երկրորդ անգամ անցնելով այդ ուղին՝ գիտակցությունը հասու է դառնում իր հասարակական բնույթին և վեր բարձրանում մինչև պատմության ճշմարիտ իմաստի ըմբռնում: Գիտակցությունն արդեն ըմբռնում է, որ պատմությունն անհատների համատեղ գործունեության արդյունք է: Նա սկսում է իրեն ընկալել որպես պատմական իրադարձությունների մասնակից: Սակայն որպես պատմական իրադարձությունների մասնակից՝ գիտակցությունը դեռ չի հասել անցած պատմության վերջնական ընկալմանը: Դրա համար ոգին հետադարձ հայացք է նետում անցած պատմական բոլոր փուլերի վրա: Դա էլ հենց գիտակցության բնական վիճակից մինչև գիտական ճանաչողություն շարժման երրորդ՝ բարձրագույն ուղին է: Այստեղ ոգին հասնում է բացարձակ իմացության: Այժմ նա գիտակցաբար վերհիշում է անցած փուլերը և կարգի բերում ճանաչողության այն պահերը, որոնք տեղի են ունեցել անցյալում: Հետևապես ոգին նորից անցնում է պատմական զարգացման փուլեր: Այդ ճանապարհի առանձին փուլերում երևան են գալիս արվեստը, կրոնը և փիլիսոփայությունը»<sup>16</sup>: Այսինքն՝ պատմությունը ոգու, ասել է թե՛ հոգևորի դրսևորման տարբեր

16 Овсянников М., Философия Гегеля, М., 1969, с. 51.

մակարդակների և փուլերի ընթացք է, ինչը նշանակում է՝ «զարգացում», «ընկալում», «ճանաչում» հասկացությունները վերաբերում են ոգու կրողին, այսինքն՝ բանական էակին և ոչ թե բնությանը: Բանական էակն ընդամենն ընկալում, ճանաչում է բնությունը, հետևապես զարգանում է: Դրան զուգընթաց՝ նա սկսում է ճանաչել նաև ինքն իրեն, որը Հեգելը ներկայացնում է որպես երեք փուլով դրսևորվող գործընթաց: Սա թերևս ամենաբարդն է: Պատահական չէ, որ հին հունական դպրոցների ճակատային մասում գրված էր. «Ճանաչիր ինքդ քեզ»:

Հասարակության պատմությունը հոգևոր զարգացման բարդ ու հակասական գործընթաց է, որը կարևոր փոխկապակցված փուլերի հաջորդականություն է: Դրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է հոգևոր զարգացման որոշակի աստիճանով: Հեգելը, ըստ հոգևորի զարգացման փուլերի, իր «Ոգու ֆենոմենոլոգիա» աշխատության բաժինները խմբավորում է հետևյալ տրամաբանությամբ. առաջին բաժնում գիտակցությունը, ինքնագիտակցությունն ու բանականությունն են, այսինքն՝ անհատական գիտակցության փոփոխությունը զգայականից մինչև բանական իրականության ճանաչողություն, որը «սուբյեկտիվ ոգին» է և ներառում է մարդաբանությունը, ֆենոմենոլոգիան ու հոգեբանությունը, երկրորդ բաժնում ոգին է (պատմության տարբեր փուլերի - Հին Հունաստան, Հռոմ, 1789 թ. Ֆրանսիական հեղափոխություն) և դրան համապատասխան գիտակցության ձևերի բնութագրումը որպես «օբյեկտիվ ոգի»՝ ներառելով արևմտական իրավունքը, բարոյախոսությունը, բարոյականությունը, որն իր հերթին ընդգրկում է ընտանիքը, քաղաքացիական հասարակությունը և պետությունը), երրորդ բաժնում՝ կրոնը, բացարձակ գիտելիքը, այսինքն՝ հասարակական գիտակցության ձևերը, ասել է թե՛ «բացարձակ ոգին»<sup>17</sup>: Փաստորեն, հեգելյան մոտեցումներով, անժխտելի է հասարակության պատմության զարգացման և կերպափոխման հոգևոր սկզբի գոյության փաստը:

**Այս համատեքստում հարկ է նշել, որ պատմությունը՝ որպես ոգու շարժում, ազատության ընկալման և իրացման բարդ ու հակասական, միմյանց հաջորդող գործընթացների ամբողջություն է:** Մարդկանց վիճակը «պարզվում է՝ ավելի շուտ իրավազրկության վիճակն է, բռնություն՝ հարուցված անմարդկային արարքների և զգացողության անզուսպ բնական հակումներով»<sup>18</sup>: «Ոգու էությունը ազատությունն է»<sup>19</sup>, իսկ վերջինս բացարձակ իմացության կամ հոգևորի ընկալման բարձրագույն մակարդակն է, որը ձեռք է բերվում ոգու ինքնաճանաչողությամբ: Այսինքն՝ Հեգելը չի բացառել իրավազրկությունը և բռնությունը, որոնց հաղթահարման ճանապարհը հոգևորի զարգացումն է, որը նա ներկայացնում է երեք հիմնա-

17 Նոյն տեղում, էջ 52, 172, 181:

18 Гегель Г., Философия истории, «Сочинения», Т. VIII, М.-Л., 1935, с. 39.

19 Նոյն տեղում, էջ 17:



կան փուլերով, այլ ոչ թե ազատության ապահովման հիմնական ինստիտուտների՝ մասնավոր սեփականության և պետության վերացման ճանապարհով:

Հեգելի կարծիքով՝ մասնավոր սեփականության ազատությունը նոր ժամանակների մեծագույն նվաճումներից մեկն է<sup>20</sup>: Այսինքն, ի հակադրություն Մարքսի, Հեգելը կարծում էր, որ մասնավոր սեփականությունը ոչ թե պետք է վերանա, այլ լինի մարդու իրավունքների, հետևապես ազատության պաշտպանության և քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնական գործիքներից կամ միջոցներից մեկը: Փաստորեն, մասնավոր սեփականության ազատության իրավական պայմանների ձևավորումը պայմանավորված է նախ և առաջ մարդու ինքնադրսևորման, սեփական «ես»-ի և ազատ կամքի, Հեգելի խոսքով ասած՝ ազատ ոգու ինքնահաստատման անհրաժեշտությամբ: Այս համատեքստում ուշագրավ է Օվսյան-նիկոլի հետևյալ միտքը. «Բարին, Հեգելի ըմբռնմամբ, իրացված ազատությունն է, բարոյականության բացարձակ և վերջնական նպատակը»<sup>21</sup>: Այսինքն, ըստ Հեգելի, մարդու հոգևոր դրսևորումների ճանապարհն ազատության ձեռքբերումն է, իսկ դրա հիմքում մասնավոր սեփականության իրավունքի իրացումն է:

## 2. Նախնադարյան համայնական հասարակարգի քայքայման, ընտանիքի մասնավոր սեփականության և պետության ծագման մասին

Ըստ մարքսիզմի՝ նախնադարյան համայնական հասարակարգը հիմնված էր համայնական կամ տոհմահամայնքային կոլեկտիվ սեփականության ձևի վրա, որտեղ ստեղծված բարիքների բաշխումը իբրև թե կատարվում էր հավասարական սկզբունքով: Նախնադարյան համայնական հասարակարգի քայքայումը մարքսիզմը բացատրում է արտադրողական ուժերի, հետևապես տնտեսության զարգացմամբ պայմանավորված հավելյալ արդյունքի ստեղծմամբ: Այդ հասարակարգի ներսում մարդկանց գործունեությունը դիտարկվում է հիմնականում երկու՝ հավաքչության և վերարտադրող տնտեսության փուլերով: Հավաքչության շրջանում յուրացվում էր բնության պատրաստի բարիքը, իսկ վերարտադրող տնտեսության զարգացման փուլում համայնքի անդամները զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ, այսինքն՝ աստիճանաբար տեղի է ունեցել աշխատանքի բաժանում, որը նպաստել է արտադրողական ուժերի հետագա զարգացմանը և հավելյալ արդյունքի ստեղծմանը: Ֆ. Էնգելսը գրում է. «Արտադրության լայնացումը բոլոր ճյուղերում մարդու աշխատանքային ուժին ունակություն տվեց

20 Ավելի մանրամասն տես Օվսյանիկով Մ., Философия Гегеля, М., 1969, էջ 182:  
21 Նույն տեղում, էջ 192:

ավելի մեծ քանակության արդյունքներ արտադրելու, քան այն, ինչ-որ պահանջվում էր այդ ուժը պահպանելու համար»<sup>22</sup>: Ըստ մարքսիզմի՝ հասարակության որոշակի խմբերի կողմից հավելյալ արդյունքի յուրացումն աստիճանաբար հանգեցնում է մասնավոր սեփականության, հետևապես դասակարգերի ձևավորմանը: «Հավելյալ արդյունքի» միջոցով մարքսիզմի հիմնադիրները փորձեցին բացատրել կուտակման գործընթացը, որն իբր հանգեցնելու է մասնավոր սեփականատիրական հարաբերությունների ձևավորմանը: Կուտակման միջոցով ապահովվում են վերարտադրական գործընթացի շարունակականությունը և արտադրության ընդլայնումը: Սահմանափակ ռեսուրսների դեպքում մարդիկ ստեղծում են այն առավելագույնը, որը հնարավոր է ստեղծել տեխնոլոգիական զարգացման տվյալ մակարդակի պայմաններում՝ պայմանավորված իրենց աճող պահանջունքների բավարարման անհրաժեշտությամբ:

Այս համատեքստում, բնականաբար, առաջանում է հետևյալ հարցը. ի՞նչն էր խանգարում, որ համայնքի անդամների միջև հավելյալ արդյունքը բաշխվեր հավասարարական սկզբունքով: Որևէ հասարակարգում այդ սկզբունքը չի կարող իրագործելի լինել հետևյալ պատճառներով. **առաջին**՝ մարդիկ տարբեր են իրենց ունակություններով, հմտություններով և ունեցած ներդրումներով, հետևապես արդյունքը չի կարող բաշխվել հավասարարական սկզբունքով, **երկրորդ**՝ մարդկանց համատեղ կյանքը ենթակա է կառավարման, որն իրականացվում է ավելի ուժեղ, հմուտ և որոշակի ձիրք ունեցող անհատների կողմից, որոնք, բնականաբար, իրենց դիրքով, հետևապես նյութական պայմաններով պետք է տարբերվեն մյուսներից, ինչն արտացոլվել է նաև բարիքների բաշխման գործում, **երրորդ**՝ համայնքի ներսում յուրաքանչյուրն ունեցել է արտադրության իր գործիքները, որոնք անընդհատ կատարելագործվել են մարդու ստեղծագործական ունակությունների դրսևորմամբ: Այսինքն՝ գոյություն չունի փաստարկված ապացույց, որ տիրապետող են եղել արտադրության միջոցների նկատմամբ համայնական սեփականության ձևը և բարիքների հավասարարական բաշխումը: Դա ընդամենը հիմնված է որոշակի ենթադրությունների վրա:

Մարքսիզմի տեսանկյունից՝ հավելյալ արդյունքի ստեղծումը նպաստել է նաև փոխանակային հարաբերությունների ձևավորմանը: Փոխանակություն իրականացնելու համար մարդիկ պետք է հավելյալ արդյունքի նկատմամբ ունենային սեփականության իրավունք: Էնգելսի կարծիքով՝ «Ամենուրեք մասնավոր սեփականությունը առաջ է գալիս արտադրության և փոխանակության փոփոխված հարաբերությունների հետևանքով՝ որպես արտադրության բարձրացման և փոխանակության զարգացման պահանջները բավարարելու միջոց. հետևաբար այն բխում

---

22 **Էնգելս Ֆ.**, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Եր., 1965, էջ 212:

է տնտեսական պատճառներից»<sup>23</sup>: Հայտնի է, որ փոխանակությունը ձևավորվել է աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով, որը նպաստել է աշխատանքի արտադրողականության, հետևապես՝ արտադրության արդյունավետության բարձրացմանը: Մարդիկ փոխանակել են ոչ թե հավելյալ արդյունքը, այլ իրենց ստեղծած բարիքների մի մասը: Այսինքն՝ նրանք, մասնագիտանալով այս կամ այն արդյունքի արտադրության մեջ, իրենց տարաբնույթ պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտաբար դրա մի մասը փոխանակել են այլ բարիքների հետ: Իսկ դա հնարավոր էր, եթե նրանք այս կամ այն գույքի նկատմամբ ունենային տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունք, ինչը նշանակում է մասնավոր սեփականության առկայություն: Փաստորեն, փոխանակային հարաբերությունները հնարավոր չէ տարանջատել մասնավոր սեփականատիրականից, քանի որ դրանք օրգանական միասնություն են կազմում:

Հարկ է նշել, որ նախնադարյան համայնական հասարակության մեջ յուրաքանչյուր ոք ունեցել է անձնական սեփականություն, և մարքսիզմը չի ժխտել այդ փաստը, սակայն փորձել է դա տարանջատել մասնավորից: «Անձնական սեփականությունը սահմանափակված է եղել նախնադարյան հասարակության մեջ տիրապետող կոլեկտիվիստական կարգուկանոններով և կրել է ենթակա, երկրորդական բնույթ»<sup>24</sup>: Այս առումով հարկ է նշել, որ սեփականության բոլոր ձևերն էլ, տնտեսական նպատակահարմարությունից և անհրաժեշտությունից ելնելով, գոյություն են ունեցել, թեև դրանց հարաբերակցությունը, բնականաբար, տարբեր է եղել: Սակայն, ըստ մարքսիզմի, անձնական և մասնավոր սեփականությունների միջև կա էական տարբերություն: Համաձայն այդ տեսության՝ եթե որևէ գույքի նկատմամբ անհատի տիրապետման, օգտագործման և տնօրինման հարաբերություններն ուղղված են մարդու կողմից մարդու շահագործմանը, ապա գործ ունենք մասնավոր սեփականության հետ, իսկ եթե սեփականության օբյեկտը չի օգտագործվում մեկ այլ անձի կողմից ստեղծված բարիքը յուրացնելու համար, ապա այդ դեպքում խոսքն անձնական սեփականության մասին է: Անձնական և մասնավոր սեփականությունների այսպիսի տարանջատմամբ շահագործողական հարաբերությունների բացատրությունը չի արտահայտում իրական գործընթացների բուն էությունը: Պատմության զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ մասնավոր սեփականության իրավունքի իրացման պայմաններն անընդհատ կատարելագործվել են, որովհետև մասնավոր սեփականության և դրա արդյունավետ բաշխվածության հիմքի վրա է հնարավոր ստեղծել արդար հասարակարգ:

23 Էնգելս Ֆ., Անտի-Ղյուրինգ, Եր., 1967, էջ 215:  
24 «Քաղաքատնտեսություն: Արտադրության կապիտալիստական եղանակ», Եր., 1975, էջ 41:

Մասնավոր սեփականության հիմքի վրա են կառուցված մարդու կենսագործունեության ներքին խթանները, որոնք, նախ և առաջ ունենալով հոգևոր-հոգեբանական շարժառիթներ, դրսևորվում են նաև նյութական արտադրության մեջ: Հենց մասնավոր սեփականության առկայությամբ է պայմանավորված եղել արտադրողական ուժերի, հետևապես նյութական արտադրության զարգացումը: Այսինքն՝ նյութական արտադրության դերակատարությունը մարդու կենսագործունեության ներքին խթանների առումով չափազանցված է, իսկ մասնավոր սեփականության բնույթի մեկնաբանությունը՝ իրականությունից կտրված: Հիմնական շփոթությունն այն է, որ պատմության ընթացքը, որն ուղեկցվել է բռնություններով, պատերազմներով և ավերածություններով, շատ վերլուծաբանների, այդ թվում՝ մարքսիզմի հիմնադիրներին, ստիպել է խնդիրը տեղափոխել այլ հարթություն ու կտրվել իրականությունից՝ նման երևույթները բացատրելով մասնավոր սեփականատիրական հարաբերությունների առկայությամբ: Ինչ վերաբերում է արդար բաշխման, մարդու ազատության, նրա անօտարելի իրավունքների պաշտպանության, բռնության, շահագործման վերացման և սոցիալական այլ հիմնահարցերին, ապա դրանց պատասխանները պետք է փնտրել ոչ թե զուտ տնտեսական, այլ ընդհանուր քաղաքակրթական գործընթացներում, որոնք ուղեկցվել են մարդու ռացիոնալ վարքագծի սահմանափակությամբ: Մի բան հստակ է. մարդու սահմանափակ ռացիոնալությունը և դրանով պայմանավորված բացասական վարքագծի դրսևորումները պայմանավորված չեն մարքսյան արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանության մտացածին օրենքի գործողության մեխանիզմով:

Մարքսիզմը դասակարգերի և պետության ծագումը բացատրում է՝ հիմնվելով մասնավոր սեփականատիրական հարաբերությունների ձևավորման վրա: Ֆ. Էնգելսի կարծիքով՝ «...Պետությունը, ամբողջությամբ վերցրած, արտադրության մեջ իշխող դասակարգի տնտեսական պահանջմունքների խտացված արտահայտությունն է միայն...»<sup>25</sup>, և «Քանի որ պետությունը ծագել է դասակարգային հակադրությունը սանձահարելու պահանջից, քանի որ այն միաժամանակ ծագել է հենց այդ դասակարգի բախումների մեջ, այդ պատճառով էլ այն, ըստ ընդհանուր կանոնի, հզորագույն, տնտեսապես տիրապետող դասակարգի պետություն է, դասակարգի, որ այդ պետության օգնությամբ նաև քաղաքականապես իշխող դասակարգ է դառնում և նոր միջոցներ է ձեռք բերում ճնշված դասակարգին ճնշելու և շահագործելու համար»<sup>26</sup>: Պետության ծագման նման բացատրությունը չափազանց միակողմանի է: Ընդհանրապես, քաղաքակրթության

25 Энгельс Ф., Людвиг Фейербах и конец классической немецкой философии, Маркс К. и Энгельс Ф., «Сочинения», М., 1961, т. 21, с. 310.

26 Էնգելս Ֆ., Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 240:

զարգացման կարևոր շրջադարձային փուլի հիմքում երկու ինստիտուտների՝ ընտանիքի և պետության ծագումն է: Ընտանիքը՝ որպես մարդու ինքնության հաստատման և շարունակականության ապահովման, իսկ պետությունը՝ որպես կենսագործունեության, անվտանգության, վարքի կանոնների ապահովման կառույց, ձևավորվել են հոգևոր զարգացման, հատկապես՝ իրավագիտակցության ձևավորման որոշակի մակարդակում կամ աստիճանում: Պետությունը դիտարկել իբրև բռնության գործիք նշանակում է աղավաղել պատմության զարգացման ողջ բովանդակությունը:

Պետությունը և ընտանիքը՝ որպես հասարակության ինքնակազմակերպման հիմնական հաստատություններ, ենթարկվել են կերպափոխությունների, որոնք, հոգևորի առումով, ուղեկցվել են անցանկալի, հակասական, հաճախ՝ անհասկանալի ու անբացատրելի գործընթացներով: Հատկապես պարզաբանման կարիք ունի այն հարցը, թե ինչու պետությունը՝ որպես ամենաառանցքային ինստիտուտ, պատմության ողջ ընթացքում, ըստ էության, հաճախ շեղվել է իր գործառույթներից: Այս հարցերի պատասխանները պետք է փնտրել ոչ թե մասնավոր սեփականատիրական հարաբերությունների (ինչպես փորձում էր հիմնավորել մարքսիզմը), այլ բուն քաղաքակրթական գործընթացների մեջ: Այս առումով վիճարկելի են Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ ներկայացված դրույթները:

Անդրադառնալով Մորգանի տեսությանը՝ Էնգելսը նշում է, որ հասարակության պատմության «Երեք գլխավոր դարաշրջաններից-վայրենություն, բարբարոսություն, քաղաքակրթություն, նրան, ինքնըստինքյան հասկանալի է, զբաղեցնում են միայն առաջին երկուսը և անցումը դեպի երրորդը»<sup>27</sup>: Բնականաբար հարց է առաջանում, թե որն է վայրենության, բարբարոսության և քաղաքակրթության սահմանը: Դա շատ հարաբերական է, և չկան այն ճշգրիտ չափանիշները, որոնցով հնարավոր կլիներ տարանջատել պատմական զարգացման այդ փուլերը:

Հասարակության պատմության «վայրենության» և «բարբարոսության» փուլերի տարանջատման տեսությունը վիճարկելի է հետևյալ հիմնավորումներով. առաջին՝ եթե քննարկման նյութը հասարակության պատմությունն է, ապա այն չենք կարող դիտարկել հոգևոր գործընթացներից դուրս անկախ դրանց դրսևորման մակարդակից: **Երկրորդ**՝ հասարակության պատմությունը սկիզբ է առնում այն ժամանակից, երբ մարդը սկսում է ստեղծել աշխատանքի գործիքներ, ինչը պայմանավորված է նրա ստեղծագործական, այսինքն՝ հոգևոր ունակությամբ, և այս առումով մերժելի է դարվինիզմի տեսությունը՝ կապված մարդու՝ որպես հո-

27 Նույն տեղում, էջ 25:

գևոր էակի ծագման հետ, քանի որ մինչ այժմ և ապագայում էլ հնարավոր չէ գիտականորեն բացահայտել բանականության ծագումը: **Երրորդ**՝ մարդկության պատմության քաղաքակրթական փուլերում տեղի են ունեցել և ունենում են այնպիսի իրադարձություններ, որոնք իրենց դաժանությամբ և սարսափազդու հետևանքներով համեմատելի չեն անգամ «վայրենության» և «բարբարոսության» փուլերի հետ: Հետևապես մարդկության պատմության հակասական իրադարձությունները հնարավոր չէ տարանջատել ընդհանուր քաղաքակրթական գործընթացից և ներկայացնել վիճարկելի սահմանազատումներով:

Մորգանը վայրենության և բարբարոսության փուլերը բաժանում է ստորին, միջին և բարձրագույն աստիճանների, որոնցից յուրաքանչյուրին վերագրում է կենսամիջոցների արտադրության մեջ աշխատանքի գործիքների կատարելագործման որոշակի մակարդակ՝ պայմանավորված կրակի գյուտով, նետ ու աղեղի ստեղծմամբ, բրուտագործության ու երկրագործության ձևավորմամբ, մետաղների մշակմամբ և այլն: Այս բոլոր գործընթացներն ինքնին վկայում են քաղաքակրթական, հետևապես մշակութային զարգացման գործընթացների մասին: Ուրեմն «վայրենություն», «բարբարոսություն» և «քաղաքակրթություն» փուլերի դիտարկումը հիմնավոր չէ, քանի որ հասարակության պատմությունը դրանց յուրահատուկ համադրությունն է, որը սկիզբ է առել վաղնջական ժամանակներից և շարունակվում է մինչև մեր օրերը: Դրա պատճառների բացատրության առումով մարքսիզմը հիմնավոր փաստարկներ չունի:

Ընտանիքը՝ որպես հոգևոր զարգացման որոշակի մակարդակի արդյունք, դարձավ նաև կարևոր տնտեսական միավոր՝ հիմնված արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա: Պարզ է, որ ընտանիքների արտադրողականությունը չէր կարող նույնը լինել, ինչն աստիճանաբար պետք է հանգեցնեք գույքային անհավասարության: Դա բնական գործընթաց է և դարձել է տնտեսական զարգացման կարևոր նախադրյալներից մեկը: Այս համատեքստում վիճարկելի է նաև ընտանիքի առաջացման Մորգանի տեսությունը, որի վրա հիմնվում է Էնգելսը: Նա գրում է. «Մենք ամուսնական երեք գլխավոր ձևեր ունենք, որոնք ընդհանուր առմամբ և ամբողջովին համապատասխանում են մարդկության զարգացման երեք գլխավոր աստիճաններին: Վայրենության շրջանին համապատասխանում է խմբամուսնությունը, բարբարոսության շրջանին՝ զուգամուսնությունը, քաղաքակրթական շրջանին՝ մենամուսնությունը, լրացված ամուսնական անհավատարմությամբ... Զուգամուսնության և մենամուսնության միջև, բարբարոսության վերջին շրջանում, խցկվում է տղամարդկանց տիրակալությունն ստրկուհիների վերաբերմամբ և բազմակնությունը»<sup>28</sup>: Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետև-

28 Նույն տեղում, էջ 99-100:

յալ հանգամանքները. **առաջին**՝ արդեն նշել ենք, որ հասարակության զարգացման «վայրենության» և «բարբարոսության» փուլերի մասին գաղափարը վիճարկելի է, **երկրորդ**՝ Մորգանն իր եզրահանգումները կատարում է Ամերիկա մայրցամաքի մեկուսացված ցեղերի ուսումնասիրությունների հիման վրա, ինչը, կարծում ենք, բավարար չէ հասարակության պատմության հակասական ու բարդ գործընթացները գնահատելու համար, **երրորդ**՝ հասարակության բարքերը, սովորույթները, բարոյականության նորմերը ենթակա են փոփոխության և տարբեր ժամանակաշրջանների առումով չափազանց հարաբերական են, **չորրորդ**՝ ամուսնությանն առնչվող բոլոր «բացասական» երևույթները՝ բռնություն, անհավատարմություն և այլն, պայմանավորված են վերոնշյալ ուսցիոնալ վարքագծի սահմանափակությամբ:

Շարունակելով իր ուսումնասիրություններն այս հարցի շուրջ՝ Էնգելսը գրում է. «Ամուսնություն կնքելու լիակատար ազատությունը միայն այն ժամանակ կարող է ընդհանուր իրականացում գտնել, երբ կապիտալիստական արտադրության և նրա ստեղծած սեփականատիրական հարաբերությունների ոչնչացումով կանհետանան այն բոլոր երկրորդական, տնտեսական նկատառումները, որոնք դեռ այսօր էլ այնքան վիթխարի ազդեցություն են գործում ամուսնու ընտրության վրա: Այն ժամանակ այլևս ոչ մի ուրիշ մոտիվ չի մնա, բացի փոխադարձ հակումից»<sup>29</sup>: Փաստորեն, ըստ Էնգելսի, «կատարյալ» ընտանիքի ձևավորումը՝ հիմնված ամուսնություն կնքելու լիակատար ազատության վրա, հնարավոր է միայն կապիտալիստական մասնավոր սեփականատիրական հարաբերությունների վերացման դեպքում: Իրականում ամուսնություն կնքելու լիակատար ազատությունը պայմանավորված է մարդու իրավունքների հիմնարար դրույթների, սահմանադրական կարգի հաստատման և իրագործման կառուցակարգերի ձևավորմամբ, ինչը կարող է տեղի ունենալ հոգևոր արժեքային համակարգի փոփոխության պատմական երկարատև գործընթացների հետևանքով և որևէ առնչություն չունի մասնավոր սեփականատիրական հարաբերությունների վերացման մարքսյան ուսմունքի հետ:

### 3. «Ստրկատիրական հասարակարգի» մարքսյան մեկնաբանությունը

Մարքսիզմը, անտեսելով քաղաքակրթական բարդ ու հակասական գործընթացները, սեփականատիրական հարաբերությունների վրա կառուցեց հասարակարգերի կերպափոխման տրամաբանությունը: Այդ տեսության համաձայն՝ հասարակական (համայնքային) սեփականության վրա հիմնված նախնադարյան

29 Նույն տեղում, էջ 109-110:

համայնական հասարակարգին փոխարինելու եկավ ստրկատիրականը, որում հիմնական արտադրողները սեփականազրկված ստրուկներ էին, որոնք համարվում էին իրենց տերերի սեփականությունը: Էնգելսը գրում է, որ Աթենքի ամենածաղկուն շրջանում քաղաքացիների (այդ թվում՝ կանայք ու երեխաներ) ընդհանուր քանակը մոտավորապես 90.000 էր, որոնց կողքին կային 365.000 երկսեռ ստրուկներ և 45.000 հովանավորության տակ գտնվող օտարականներ ու ազատ արձակվածներ<sup>30</sup>, սակայն չի նշում այդ թվական տվյալների աղբյուրը: Նա չի նշում մյուս սոցիալական խմբերի, մասնավորապես՝ մտավորականների, ծառայողների, արհեստավորների, առևտրականների, զինվորների և այլ խմբերի թվաքանակը: Բացի այդ՝ նա չի անդրադառնում գյուղական բնակչությանը, որը քաղաքայինի համեմատ զգալիորեն ավելի մեծ տեսակակար կշիռ ուներ:

«Ստրկատիրական» կոչվող հասարակարգի բնույթի վերաբերյալ որոշակի պատկերացում են տալիս Հին Հունաստանին և Հռոմին նվիրված հետազոտությունները: Հողվածի շրջանակներում հատկապես կդիտարկենք այդ երկու երկրների օրինակը՝ հետևյալ պատճառներով. **առաջին**՝ Հին Հունաստանի և Հռոմի պատմությունը մեծ ազդեցություն է ունեցել հետագա բոլոր, հատկապես՝ արևմտյան քաղաքակրթական գործընթացների վրա, **երկրորդ**՝ այդ երկրների պետական-քաղաքական մոդելը դարձել է օրինակելի նմուշ մյուսների համար, և այս առումով ժամանակակից «առաջադիմական» կամ «ժողովրդավարական» կոչվող երկրների նմանատիպ մոդելները քիչ գծերով են տարբերվում նախորդներից, **երրորդ**՝ թողել է մեծ ժառանգություն հոգևոր մշակույթի և գիտության զարգացման բոլոր ոլորտներում, որոնք հիմքի վրա բարձրացել է եվրոպական հոգևոր մշակույթը, իսկ դրանց արդյունքներն անսպառ աղբյուր են դարձել հետագա ուսումնասիրությունների համար:

Ի. Պոկրովսկին իր «Հռոմեական իրավունքի պատմություն» աշխատության մեջ մանրամասնորեն անդրադառնում է Հռոմի իրավական համակարգի կերպափոխման փուլերին, որոնք նպաստել են հասարակական և պետական կառուցվածքի պահպանմանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փոփոխությանը: Վերոնշյալ աշխատության մեջ Պոկրովսկին ներկայացնում է Հռոմի հիմնական սոցիալական խմբերը՝ պատրիկ (լիիրավ քաղաքացի), կլիենտ (ոչ լիիրավ քաղաքացի) և պլեբեյ (ստորին դասի անձնապես ազատ քաղաքացի), հնագույն պետական կառուցվածքը՝ թագավոր, Սենատ և Ազգային ժողով: Նա նշում է, որ պլեբեյները եղել են վերաբնակներ, որոնք մասնակցություն չեն ունեցել հասարակական նշանակության կարևոր գործերին, բայց ազատված էին պարտադիր զինվորական, հարկային և

---

30 Տե՛ս նույն տեղում, էջ 163:



համապետական այլ ծառայությունների<sup>31</sup>: Տնտեսական գործունեության հիմնական ոլորտներ էին գյուղատնտեսությունը՝ հիմնված ընտանեկան (մասնավոր) սեփականության իրավունքի վրա, արհեստագործությունը, առևտուրը և աշխատանքի այլ տեսակներ<sup>32</sup>: Հռոմի պատմության հանրապետական փուլում իրենց իրավունքների համար պայքարում «պլեբեյները դարձան ամբողջությամբ իրավահավասար պատրիկներին, չնայած որպես առանձին դաս՝ նրանք և մյուսները շարունակում էին մնալ կողք կողքի և հեռու»<sup>33</sup>: Աստիճանաբար առանձնանում են այն ընտանիքները, որոնց ներկայացուցիչները բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական կառույցներում<sup>34</sup>: Այս ճանապարհով ձևավորվում է ազնվականական դասը՝ կազմված ինչպես պատրիկների, այնպես էլ պլեբեյների ընտանիքներից<sup>35</sup>: Ազնվականական դասին զուգընթաց ձևավորվում է սոցիալական այլ խումբ՝ հանձինս հեծյալների դասի<sup>36</sup>: Հռոմի պատմության հանրապետական փուլի պետական իշխանության կառուցվածքի մաս էին Ազգային ժողովը և Սենատը, սակայն հանրապետական վարչակարգի ձևավորումից հետո թագավորական իշխանության որոշակի գործառույթներ փոխանցվում են նոր մարմիններին:

Ինչ վերաբերում է Հռոմի իրավական համակարգի ձևավորմանը, այդ մասին Պոկրովսկին գրում է. «Հանրապետական փուլի սկիզբը նշանավորվում է հետագա հռոմեական ողջ իրավագաղափարային համար բացառիկ կարևորություն ունեցող իրադարձությամբ, այն է՝ օրենսգրքի կազմումը և հրատարակումը, որը հայտնի է «Օրենքների XII աղյուսակ» անվանումով»<sup>37</sup>: Հարկ է նշել, որ նշված աղյուսակը կազմելիս «նախապես որոշվել է երեք մարդուց բաղկացած պատգամավորություն ուղարկել Հունաստան, ընդ որում, «Օրենքների XII աղյուսակի» I և II մասերը պարունակում են քաղաքացիական դատավարության դրույթներ, III-ը՝ վարույթ անվճարունակ պարտապանի դեմ, IV-ը՝ դրույթներ հայրական իշխանության մասին, V-ը և VI-ը վերաբերում են խնամակալությանը, ժառանգությանը և սեփականությանը, VII-ը և VIII-ը՝ պարտավորական փոխհարաբերություններին, IX-ը և X-ը՝ հանրային և սրբազան իրավունքին, XI-ը և XII-ը ընդգրկում են տարբեր լրացուցիչ հոդվածներ<sup>38</sup>: Սա վկայում է այն մասին, որ Հռոմը հասել էր հոգևոր-մշակութային, քաղաքական և իրավական փոխհարաբերությունների զարգացման բարձր, ասել է թե՛ քաղաքակրթական մակարդակի: Հետևաբար վիճարկելի է Հռոմը «ստրկատիրական հասարակարգ» համարելը: Ողջ պատմության ընթացքում հռոմեական իրա-

31 Տե՛ս Покровский И. Б., История римского права, М., 1998, էջ 72:

32 Տե՛ս նույն տեղում, էջ 45, 49:

33 Նույն տեղում, էջ 90:

34 Տե՛ս նույն տեղում:

35 Տե՛ս նույն տեղում:

36 Տե՛ս նույն տեղում:

37 Նույն տեղում, էջ 117-118:

38 Նույն տեղում, էջ 120:

վունքի մեջ քաղաքացիական իրավունակության գերագույն և հիմնական պայմանը եղել է **ազատության** հասնելը<sup>39</sup>: Իհարկե, սա չի նշանակում, որ հռոմեական տիրապետության ժամանակաշրջանում իրավագուրկներ (ստրուկներ) չեն եղել, որոնք համարվել են ոչ թե իրավունքի սուբյեկտներ, այլ օբյեկտներ, ոչ թե անհատներ (persona), այլ իրեր (res)<sup>40</sup>: Հիմնական խնդիրն այն է, թե ինչպես է ձևավորվել իրավագուրկների դասը:

Ստրկության առաջին աղբյուրը Պոկրովսկին համարում է պատերազմի գերիներին, որոնց թիվը մեծ չի եղել<sup>41</sup>: Նա գրում է, որ ստրուկների հիմնական մասը կազմել են հեռավոր երկրներից բերված (Ասիա, Աֆրիկա, Եվրոպայի առանձին մասեր), հաճախ այլ ռասայի, մշակութային մակարդակի և արտաքին տեսքի մարդիկ<sup>42</sup>, և «հնագույն հռոմեական իրավունքը չի ունեցել ոչ մի սահմանափակում ստրուկներին ազատ արձակելու համար»<sup>43</sup>: Ավելի քան պարզ է դառնում, որ ստրուկները պատերազմների հետևանքով ձևավորված դաս են, ոչ թե տվյալ հասարակարգին բնորոշ օրինաչափ երևույթ: Գրեթե բոլոր դարաշրջաններում պատերազմական իրավիճակներում ռազմագերիների հետ նույն ձևով են վարվել, իսկ 20-րդ և 21-րդ դարերում երբեմն ավելի դաժան, ստորացուցիչ ու անմարդկային վերաբերմունքի են արժանացրել: Այդ դեպքում ո՞րն է առաջընթացի չափանիշը: Կարո՞ղ ենք ասել, որ ոչինչ չի փոխվել, կամ ստրկությունը չի վերացել: Այս հարցերի պատասխանը պատմության մարքսյան ընկալումը չի կարող տալ, որովհետև հասարակական բարդ գործընթացներն իրականում պայմանավորված են միանգամայն այլ դրդապատճառներով:

Առանձնապես հետաքրքրական են ստրկության վերաբերյալ Ա. Դովատտորի վերլուծությունները: Նա գրում է. «Երկու հեղինակներն էլ (Արիստոտելը և Պլուտարքոսը – Հ. Ա.) իրենց ուշադրությունը սևեռում են մեկ որոշակի, իհարկե, շատ կարևոր և այդ դարաշրջանի համար բնութագրական հարուստ հողասեփականատերերի և աղքատ, հատկապես՝ գյուղական բնակչության սոցիալական ընդհարման վրա»<sup>44</sup>: Քանզի «Ժողովրդական զանգվածը, ըստ Արիստոտելի, պարտք էր հարուստներին»<sup>45</sup>: Սոցիալական որոշակի շերտերի աղքատացման, իսկ մյուսների հարստացման գործում, ինչպես նշում է հեղինակը, էական դեր են ունեցել կուտակված հսկայական պարտքերը, որոնք մարվում էին ունեզրկմամբ և հաղթահարվում որոշակի ռեֆորմների իրականացմամբ: Մասնավորապես, բնակչության զգալի զանգված, ըստ Դովատտորի, Սոլոնի ռեֆորմների շնորհիվ կարողացավ խուսափել

39 Տե՛ս նույն տեղում, էջ 281:

40 Տե՛ս նույն տեղում:

41 Տե՛ս նույն տեղում:

42 Տե՛ս նույն տեղում, էջ 282:

43 Նույն տեղում, էջ 291:

44 Доватур А., Рабство в Аттике VI-V века д. н. э., Ленинград, 1980, с. 13.

45 Նույն տեղում, էջ 17:

ստրկական վիճակից<sup>46</sup>: Սա ընդհանուր օրինաչափություն էր, ինչը բնութագրական է եղել բոլոր երկրների համար: Ուստի Դովատուրի կարծիքով՝ «հարուստ-աղքատ համակարգը բավարար չէ այդ հասարակարգի իրական կազմը պարզաբանելու համար»<sup>47</sup>, որովհետև ինքը՝ Սոլոնը, ինչպես նշում է հեղինակը, իր մի բանաստեղծություն մեջ թվարկում է տարբեր մասնագիտության մարդկանց՝ առևտրականներ, արհեստավորներ, բժիշկներ և այլն<sup>48</sup>: Այս առումով կարևոր է նրա հետևյալ միտքը. «Ենթատեքստը (հեղինակը նկատի ունի Սոլոնի բանաստեղծությունը - Հ. Ա.) հնարավորություն չի տալիս ճշգրտորեն որոշելու, թե որ ստրկության մասին է մտածում պոետը՝ այլ պետության ենթարկվելով, թե՛ քաղաքացիների մեծ մասին ստրկացնելու»<sup>49</sup>: Ուշագրավ է Դովատուրի այն միտքը, որ, ըստ Սոլոնի ռեֆորմների, արգելվեց հարկադիր ստրկությունը<sup>50</sup>, այսինքն՝ անվճարունակ պարտատիրոջ կարգավիճակը, որը հատկորեն չի ներկայացվում, և այդ պատճառով անհասկանալի է դառնում վերջինիս «ստրուկ» լինելու հանգամանքը: Ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին:

**Առաջին՝** ինչպե՞ս ձևավորվեց ստրկությունը, և ո՞վ էր ստրուկը: Հարկ է նշել, որ սոցիալական շերտավորումը, հասարակության բաժանումը աղքատների և հարուստների, հետևապես տնտեսական կախվածության ձևավորումը պայմանավորված են բազմաթիվ գործոններով, որոնց բնույթը, ըստ էության, չի փոխում. փոխվում է միայն դրանց դրսևորման մակարդակը: Սոցիալական շերտավորման հետևանքով ձևավորված աղքատության, ունեզրկման, սոցիալական ծանր իրավիճակում հայտնված մարդկանց պե՛տք է արդյոք համարել «ստրուկներ»: Սա վիճարկելի հարց է, որովհետև յուրաքանչյուր հասարակարգ բնութագրելիս շատ կարևոր է խորությամբ ընկալել ձևավորված արժեքային համակարգը կամ ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների բնույթը: Այսպես, օրինակ, Դովատուրը նշում է, որ «ստրուկի նկատմամբ ազատ քաղաքացիների, հատկապես անվանի մարդկանց վերաբերմունքի մասին մենք տեղեկանում ենք բանաստեղծ Թեոգնիդեսի (մ. թ. ա. VI-րդ դար - Հ. Ա.) բանաստեղծություններից: Շատ տպավորիչ է Թեոգնիդեսի հետևյալ երկտողը. «Ես ոչ մի մերձավորի և հավատարիմ ընկերոջ չեմ դավաճանել, և իմ հոգու մեջ չկա ոչինչ ստրկական»<sup>51</sup>: Փաստորեն, «ստրուկի» կերպարը կամ կարգավիճակը նա ներկայացնում է ըստ անհատի կերտվածքի և բնավորության հատկանիշների, ոչ թե տնտեսական վիճակի:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 20:

47 Նույն տեղում, էջ 14:

48 Տե՛ս նույն տեղում:

49 Նույն տեղում:

50 Տե՛ս նույն տեղում, էջ 20:

51 Մեջբերումը ըստ *Доватур А.*, *Աշխ.*, էջ 21:

Դովատուրը վերոնշյալ աշխատության մեջ նշում է, որ «ստրուկ» եզրույթը ընկալվել է տարբեր ձևերով<sup>52</sup>: Այս առումով նա գրում է, որ գիտնականների փորձը՝ «ստրուկ» անվանումն ամրակցելու որոշակի տեսակի ստրուկների՝ ըստ նրանց կատարած աշխատանքի հատկանիշի, որևէ համոզիչ արդյունքի չի հանգեցրել<sup>53</sup>:

Հայտնի է, որ, ըստ հույն մեծ մտածող Պլատոնի, իդեալական պետությունը հիմնված է սոցիալական երեք շերտերի (փիլիսոփաներ, որոնք կառավարում են հասարակությունը, զինվորներ, որոնք ապահովում են երկրի անվտանգությունը, և հողագործներ, արհեստավորներ ու առևտրականներ, որոնք ստեղծում են բարիքներ) ներդաշնակ փոխհարաբերության վրա: Իսկ Արիստոտելի կարծիքով՝ Հունաստանի բնակչությունը կազմված էր հողագործներից, արհեստավորներից, առևտրականներից, վարձու աշխատողներից և զինվորներից: Ե՛վ Պլատոնը, և՛ Արիստոտելը ստրուկին չեն համարել կարևոր սոցիալական դաս: Դովատուրը, վերլուծելով Արիստոտելի տեսակետը, համաձայն որի՝ որոշ մարդիկ իրենց էության մեջ ազատ են, մյուսները՝ ստրուկ, ընդհանրացնում է. «Այսպիսով՝ մի շարք մարդկանց ստրկական վիճակը պայմանավորված է բուն խառնվածքով, ինչը նրանց դարձնում է անգործունակ ինքնուրույն կյանքի նկատմամբ: Նրանք կարիք ունեն ղեկավարի, տիրոջ, որոնց հրամանները ի վիճակի են հասկանալու և կատարելու: Խառնվածքով ստրուկ մարդկանց համար լավագույն վիճակը տիրապետության տակ լինելն է»<sup>54</sup>:

Փաստորեն, ըստ այդ մոտեցման, «ստրուկի» կարգավիճակը պայմանավորված է բարոյահոգեբանական հատկանիշներով: Դա նշանակում է՝ հասարակական և ընդհանրապես քաղաքակրթական բարդ գործընթացներն անհրաժեշտ է ներկայացնել բազմաթիվ գործոնների համադրմամբ, ինչը հնարավորության կտա որոշակի պատկերացում կազմելու պատմության հակասական, երբեմն «անհասկանալի» զարգացումների մասին:

Թեև շատ հարցերի պատասխաններ ստանում ենք բազմաթիվ վերլուծություններից, սակայն ամեն անգամ դրանք ավելի են հստակեցվում նորագույն շրջանում տեղի ունեցող իրադարձությունների դիտարկմամբ, ինչը վերահաստատում է այն ճշմարտությունը, որ, խորքային իմաստով, պատմության ընդհանուր տրամաբանությունն էական փոփոխությունների չի ենթարկվել: Այս առումով հետաքրքրական է Դովատուրի հետևյալ միտքը. «Արդյո՞ք արդարացի է ստրկությունը: Այստեղ Արիստոտելը բախվում է երկու կարծիքի: Արդարությունը ոմանց համար բարյացակամություն է, մյուսների համար հենց ավելի ուժեղի կողմից ստրկացման փաստն

52 Տե՛ս նույն տեղում, էջ 28-29:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 29:

54 Նույն տեղում, էջ 124:

է»<sup>55</sup>: Սա նշանակում է՝ «ո՞վ էր ստրուկը» հարցի պատասխանը հստակ չէ, քանի որ երբ խնդիրը դիտարկում ենք նորագույն պատմության տեսանկյունից, գործ ենք ունենում միմյանցից ոչ մի էական բանով չտարբերվող նույն սոցիալական երևույթների հետ:

**Երկրորդ՝** պատմականորեն ի՞նչն է համարվել ստրկության աղբյուր: Տիրապետող է այն մոտեցումը, որ ստրկության հիմնական աղբյուրը ռազմագերիներն էին: Դովատուրը գրում է. «Պետք է կարծել, որ շուկայում վաճառվում էին մեծ թվով և, հնարավոր է, գերազանցապես պատերազմական գործողությունների ժամանակ գերի վերցված՝ ոչ հունական ծագում ունեցող ստրուկներ»<sup>56</sup>: Ինչ վերաբերում է ստրկական աշխատանքին, ապա Դովատուրը նշում է, որ գրական ստեղծագործություններում ստրուկները հանդես են գալիս որպես տնային տնտեսության ծառայողներ<sup>57</sup>: Բացի այդ, ինչպես նշում է նա, առանձնացվել են ստրուկներ, որոնք անձամբ ծառայել են տիրոջն ու նրա ընտանիքին, և ստրուկներ, որոնք ապրել են առանձին՝ ունենալով իրենց վաստակը, որի մի մասը պարտավոր էին տալ տիրոջը<sup>58</sup>: Իսկ «ստրուկների թիվը կախված էր ֆիզիկական աշխատանքի համար անհրաժեշտ չափահաս տղամարդկանց ներկրումից, հիմնականում՝ արևելյան երկրներից: Ներկրվող ստրուկների թիվը տատանվում էր՝ կախված տնտեսական և քաղաքական պատճառներից»<sup>59</sup>: Ուստի գոյություն ունի չափազանցված պատկերացում ստրուկների թվաքանակի վերաբերյալ<sup>60</sup>:

Այսպիսով՝ «ստրուկների» առկայությունը պայմանավորված չէր «արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների» համապատասխանության օրենքի գործողությամբ: Ստրկության ֆենոմենը թաքնված է քաղաքակրթական բարդ ու հակասական գործընթացների խորշերում, որի բնույթը հնարավոր չէ պարզաբանել դրա արտաքին դրսևորումներով: Ստրկությունը, ինչպես ցանկացած սոցիալական երևույթ, պայմանավորված է սոցիալ-հոգեբանական, հոգևոր-մշակութային համապատասխան կենսակերպի դրսևորումներով: Դրանք աստիճանաբար ձևավորել են անհրաժեշտ վարվելաձևի կանոններ և դարձել են ավանդույթ: Ուստի առաջ է եկել համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը: Հետևաբար «ստրկությունը» թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ բարոյահոգեբանական առումով մնայուն երևույթ է, որովհետև այն ձևավորող պատճառները չեն վերացել, փոխվել են միայն դրանց դրսևորման ձևերն ու մակարդակները:

55 Նույն տեղում, էջ 125:  
56 Նույն տեղում, էջ 60:  
57 Նույն տեղում, էջ 67:  
58 Տե՛ս նույն տեղում, էջ 68:  
59 Նույն տեղում, էջ 35:  
60 Տե՛ս նույն տեղում, էջ 62:

Վերոշարադրյալից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները: **Առաջին**՝ նույնիսկ «դասական ստրկատիրական պետություններ» համարվող Հին Հունաստանի պոլիսներում և Հռոմում «ստրուկների» առկայությունը պայմանավորված է եղել արտաքին և ոչ թե ներքին գործոններով, և նրանց սոցիալական կարգավիճակի վերաբերյալ պատկերացումները հակասական են: Բացի դրանից՝ նրանք մեծ թիվ չեն կազմել և սոցիալական աստիճանակարգության համակարգում էական տեղ չեն զբաղեցրել, ուստի ՀՆԱ արտադրության գործում փոքր տեսակարար կշիռ են ունեցել, այսինքն՝ «ստրկական աշխատանքի» առկայության փաստը հիմք չի տալիս սոցիալական ողջ համակարգը բնութագրելու որպես ստրկատիրական: **Երկրորդ**՝ քաղաքական համակարգը գործել է ժողովրդավարական հասարակարգերին բնորոշ որոշակի սկզբունքներով: **Երրորդ**՝ հասարակարգերի բնույթը և դրսևորման ձևերը պայմանավորված են եղել քաղաքակրթական զարգացման առանձնահատկություններով, որտեղ էական դեր են ունեցել հոգևոր-մշակութային ընկալումներն ու դրանց համապատասխան սովորույթները, ավանդույթները և քաղաքական համակարգի բնույթը: **Չորրորդ**՝ «ստրուկի» կարգավիճակում գտնվող սոցիալական որոշակի խմբեր միշտ էլ գոյություն են ունեցել և ունեն բոլոր, անգամ՝ զարգացած երկրներում, այսինքն՝ բռնությունը, անարդարությունը, ունեզրկումը, մարդկանց իրավունքների սահմանափակումը և դաժանությունը եղել են պատմությանը հայտնի բոլոր հասարակարգերում և կան այժմ էլ: Իրականում փոխվել են դրանց դրսևորման ձևերը և ոչ թե էությունը: Հետևապես «ստրկատիրական հասարակարգի» մասին մարքսիստական ուսմունքը չի համապատասխանում պատմության զարգացման ներքին տրամաբանությանը:

#### 4. «Ֆեոդալիզմ» և «կապիտալիզմ»

Ստրկատիրական հասարակարգի փոխարինումը ֆեոդալականով Մարքսը բացատրում է նույն՝ «արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքի» գործողությամբ: Ըստ էության, բոլոր ժամանակաշրջաններում էլ անհրաժեշտություն է առաջացել իրականացնելու տնտեսական ու քաղաքական համակարգերի կերպափոխումներ, որոնց հիմքում մարդու ազատության սահմանափակումների հաղթահարումն է և, ըստ այդմ, տնտեսական խթանման նոր սկզբունքների կիրառումը: Այլ հարց է, թե դրանք ինչ արդյունավետություն են ունեցել:

Հետևաբար ծագում են հետևյալ հարցերը:

**Առաջին**՝ ո՞րն էր «ճորտի» և «ստրուկի» տարբերությունը: Ըստ էության, նրանց հասարակական կարգավիճակու ոչ մի էական փոփոխություն չի կատարվել: Թեև մարքսիզմը փորձում է հիմնավորել, որ այնուամենայնիվ գրանցվել է էական առաջ-

ընթաց՝ պայմանավորված այն հանգամանքով, թե իբր՝ «ճորտ» գյուղացին, բացի հողից, ունեցել է արտադրության մյուս միջոցների նկատմամբ սեփականության իրավունք: Սակայն դա չափազանցված մոտեցում է, քանի որ, պայմանավորված տվյալ երկրի զարգացման առանձնահատկություններով, եղել են նաև հողի մասնավոր սեփականության վրա հիմնված մանրգյուղացիական տնտեսություններ: «Ճորտը» հողագուրկ գյուղացին էր, որն իր գոյությունը պահպանելու համար վարձակալության սկզբունքով աշխատել է խոշոր հողասեփականատիրոջ հողատարածքներում: «Ճորտը» նույն «իրավագուրկն» էր և ենթարկվում էր տարատեսակ «բռնությունների», երբեմն՝ ավելի դաժան, քան «ստրուկը»: Ավելին՝ «Ֆեոդալական» միջնադարն ընկղմված էր մարդկային իրավունքների սահմանափակման և անտեսման, ընդհուպ հավատաքնության և ինկվիզիցիայի սարսափելիորեն դաժան ու երկարատև շրջափուլում, որն անգամ համեմատելի չէ նույն մարքսյան «ստրկատիրական հասարակարգի» դաժանությունների հետ:

Հետևապես հասարակարգի «առաջընթացը» գնահատելու ինչպե՛ս և ի՞նչ չափանիշներով կարելի է համեմատել «ստրկատիրական» Հին Հունաստանը և Հռոմը միջնադարյան «Ֆեոդալական» Իտալիայի, Անգլիայի, Իսպանիայի և Գերմանիայի հետ: Եվրոպական հոգևոր-մշակութային արժեհամակարգը գերազանցապես հիմնված է Հին Հունաստանի և Հռոմի ժառանգության վրա: Ուրեմն ո՞րն է միջնադարյան «Ֆեոդալական» Եվրոպայի «առաջընթացը» «ստրկատիրական» Հին Հունաստանի և Հռոմի համեմատությամբ: Այսինքն՝ հասարակական բարդ ու հսկայական գործընթացների տրամաբանությունը չի տեղավորվում պատմության մարքսիստական ընկալման արհեստական և մտացածին սխեմաներում:

Ս. Մարկովան, փորձելով ներկայացնել «Ֆեոդալիզմ» հասկացության ժամանակակից մեկնաբանության անհրաժեշտությունը, գրում է. «Մարքսիզմը պատմական գործընթացներում դրսևորվող երևույթները խստորեն տարբերակել է ըստ առաջնայինի՝ հիմնականի՝ որոշիչի և երկրորդայինի՝ վերնաշենքայինի, ինչն ի վերջո հանգեցրել է սոցիոլոգիական տրամաբանության դրոյթներով տարվելուն և կենդանի, իրական պատմության վերլուծությունից հեռանալուն: Այսպիսով՝ պատմական գործընթացի ամբողջական ընկալումը խախտվել է, այսպես կոչված, համակարգի հիմնական հատկանիշների բացարձակացմամբ...

Մարքսիզմը, փաստորեն, հպատակեցրել է գիտությունը՝ դրան զրկելով մարդկության պատմության ուսումնասիրման իրավունքից՝ կապված հոգևոր կյանքի և գիտակցության հետ»<sup>61</sup>:

61 Маркова С., Понятие «феодализм» в современной исследовательской интерпретации, <https://cyberleninka.ru>, article, p. 3.

Հարկ է նշել, որ, պայմանավորված տվյալ երկրի առանձնահատկությամբ, բացի «ճորտերից», եղել են նաև այլ սոցիալական խմբեր, հատկապես՝ ազատ գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, մշակույթի գործիչներ, գիտնականներ, զանազան մասնագիտության տեր քաղաքացիներ, որոնք կարևոր դեր են ունեցել միջնադարյան «Ֆեոդալական» կոչվող հասարակարգի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում: Այսինքն՝ գործ ունենք որոշակիորեն կերպավորված հասարակարգի հետ, որը դարձյալ, ինչպես «ստրկատիրականը», հիմնված էր ինստիտուցիոնալ բարդ ու հակասական փոխհարաբերությունների վրա, և որի էության բացահայտման բանալին քաղաքակրթական գործընթացների ներքին տրամաբանության ճանաչողությունն է: Հետևապես հասարակարգերի բնույթի գնահատման մարքսիստական չափանիշները չեն աշխատում:

**Երկրորդ՝** ո՞րն է 17-րդ դարի անգլիական և 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխությունների դերը մարքսյան «կապիտալիստական» հասարակարգի տեսության ձևավորման գործում: Մարքսի կարծիքով՝ այդ հեղափոխությունների հետևանքով հիմնական բարիք ստեղծողները՝ գյուղացիներն ու բանվորները, ձեռք բերեցին իրավական ազատություն: Սակայն քանի որ չվերացավ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, չվերացավ նաև մարդու կողմից մարդու շահագործումը: Ըստ Մարքսի՝ եթե «ստրկատիրական» և «Ֆեոդալական» հասարակարգերում շահագործումը հիմնված է անմիջական անձնական կախվածության վրա, այսինքն՝ արտատնտեսական է, ապա «կապիտալիզմը»՝ տնտեսական հարկադրանքի վրա, ինչի հետևանքով այդ հասարակարգում շահագործումը քողարկված է: Մարքսի «Կապիտալի» առաջին հատորը նվիրված է այդ թեզի գիտական հիմնավորմանը: Ինչպես շատ այլ դեպքերում, այդ աշխատության մեջ նույնպես Մարքսը դիմում է իր հիմնական զենքին՝ ծայրահեղության հասնող և իրականությունից կտրված վերացարկմանը: Նա առաջ է քաշում այն թեզը, համաձայն որի՝ «կապիտալիզմի» ժամանակ հիմնական արտադրող վարձու բանվորը թեև իրավաբանորեն ազատ է, սակայն զուրկ է արտադրության միջոցների սեփականությունից: Նա շուկայում վաճառում է իր միակ սեփականությունը՝ աշխատուժը, այսինքն՝ ֆիզիկական և մտավոր ունակությունների ամբողջությունը: Այդ պայմաններում, ըստ Մարքսի, աշխատուժը վերածվում է ապրանքի, այսինքն՝ դառնում է առուվաճառքի օբյեկտ: Նա հանգում է այն եզրակացության, որ աշխատուժն էականորեն տարբերվում է մյուս ապրանքներից, և նշում է երկու էական տարբերություն. **առաջին**՝ ի տարբերություն մյուս ապրանքների՝ աշխատուժը սպառման ընթացքում ստեղծում է արժեք (բարիք), **Երկրորդ**՝ սպառման ընթացքում աշխատուժը ստեղծում է ավելի մեծ արժեք, քան իր արժեքն է: Այսինքն՝ եթե աշխատուժի արժեքը X մեծություն է, որի չափով նրա սեփականատերը՝ բանվորը, ստանում է աշխատավարձ, ապա



արտադրության ընթացքում նա ստեղծում է X+ΔX մեծությամբ արժեք: Մարքսի կարծիքով՝ ΔX-ը բանվորին չվճարված գումարն է, որը յուրացվում է արտադրության միջոցների սեփականատեր կապիտալիստի կողմից, հետևապես վերջինս շահագործում է վարձու բանվորին և այդպես հարստանում: Այդ չվճարված գումարը Մարքսը համարեց հավելյալ արժեք, որը հետագայում իր հետևորդները համարեցին նրա տեսության անկյունաքարը:

**Երրորդ՝** Մարքսի «Կապիտալ» աշխատության առաջին հատորը լույս է տեսել 1867 թ., երբ նա 49 տարեկան էր, որը հասարակագետ գիտնականի համար ստեղծագործելու լավագույն տարիքն է: Դրանից հետո Մարքսն ապրել է 16 տարի: Հարց է առաջանում. ինչո՞ւ այդ ընթացքում նա չիրատարակեց «Կապիտալի» մյուս հատորները, և միայն նրա մահից հետո դրանք լույս ընծայվեցին Ֆ. Էնգելսի կողմից: Հիմնական պատճառներից է այն, որ «Կապիտալի» առաջին հատորի լույսընծայումը համընկավ տնտեսագիտության նոր ուղղության՝ **մարքսիստիկայի** տեսության ձևավորման հետ, և, ամենայն հավանականությամբ, Մարքսը համոզվեց, որ իր տնտեսագիտական ուսմունքը մտել է փակուղի:

**Չորրորդ՝** «կապիտալիզմի» ներքին օրինաչափությունների և բնույթի մարքսյան «բացահայտումներին» հետևեցին պատմական մի շարք կարևոր իրադարձություններ, որոնք հիմնավորապես հերքեցին մարքսիզմի տեսական եզրահանգումների ճշմարտացիությունը: Առ այդ:

ա) Մարքսից և Էնգելսից հետո բուռն զարգացում ապրեց հասարակագիտական, այդ թվում՝ տնտեսագիտական միտքը, ինչը շարունակականության առումով գրեթե կապ չունի նրանց տեսական դրույթների հետ:

բ) Մարքսիզմի հետևորդները՝ բուլժևիկները, փորձեցին 20-րդ դարի սկզբին կյանքի կոչել նրա տեսական գաղափարները, ինչը ողբերգական հետևանքներ ունեցավ Ռուսաստանում, ապա՝ Չինաստանում ու Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում:

գ) Մարքսի մատնանշած «կապիտալիստական» երկրներում իրականացված հետևողական բարեփոխումները, գիտության և տնտեսության բուռն զարգացումը, սոցիալական բևեռացման մեղմացումն ու բնակչության բարեկեցության բարձրացումն ապացուցեցին մարքսյան դրույթների և իրականության խոր հակասությունը:

### Ամփոփում

Մարքսը և Էնգելսը փորձել են հասարակության պատմության օրինաչափությունները բացահայտել **հասարակական-տնտեսական ֆորմացիաների տե-**

**սուբյամբ:** Ըստ մարքսիզմի՝ հասարակական-տնտեսական ֆորմացիաների գոյությունը պայմանավորված է այսպես կոչված, բազիսի և վերնաշենքի փոխհարաբերությամբ: Բազիսը սեփականատիրական հարաբերություններով պայմանավորված տնտեսակարգն է: Դրա էությունը համապատասխան ձևավորվում է վերնաշենքը, այսինքն՝ իրավական, քաղաքական և գաղափարական հարաբերությունների ամբողջությունը: Այդ պատճառով մարքսիզմը հոգևոր ոլորտը համարում է ածանցյալ բազիսի նկատմամբ: Թեև 1890 թ. Յ. Բլոխին ուղղված նամակում Էնգելսը գրում է, որ մասամբ ինքն ու Մարքսն են մեղավոր այն բանում, որ երիտասարդությունը ժամանակ առ ժամանակ մեծ նշանակություն է տալիս տնտեսական կողմին, քան անհրաժեշտ է<sup>62</sup>, սակայն նրա այս խոստովանությունն ընդամենը մի փոքր դիպված է և, ըստ էության, չի դարձել այն պատգամը, որ պետք է հաշվի առնելին մարքսիզմի հետևորդները:

Մարքսն ու Էնգելսն իրենց ողջ գիտական գործունեության ընթացքում գրեթե դուրս չեկան ի սկզբանե ձևավորված, ինչ-որ առումով կանխակալ դրույթների շրջանակից և ամեն մի սոցիալական երևույթ՝ ընտանիք, պետություն, սովորույթներ ու բարոյականություն, քննեցին հասարակական տնտեսական ֆորմացիաների կերպավորման տրամաբանությամբ: Նրանք սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային, պետական-քաղաքական, ասել է թե՛ քաղաքակրթական բարդ գործընթացները փորձեցին բացատրել պարզունակ՝ «դասակարգային հակամարտության» տեսանկյունից:

Ոչ ոք չի կարող ժխտել, որ մարդկության պատմությունը հարուստ է, այսպես կոչված, «դասակարգային հակամարտություններով», որոնք երբեմն վերածվել են ավերիչ քաղաքացիական պատերազմների: Բայց հազարամյակների պատմությունը ցույց է տալիս, որ նման հակամարտություններն ընդամենը հասարակության ներսում տեղի ունեցող խորքային գործընթացների ներքին շարժառիթների արտաքին դրսևորումներն են՝ իրենց տեսանելի ու անտեսանելի դրդապատճառներով, որոնք, ըստ էության, անփոփոխ են:

Մարքսիզմի հակասականությունը մնում է առեղծվածային: Դժվար է հավատալ, որ բազմակողմանիորեն զարգացած, գիտության տարբեր ոլորտների, գրականության և մշակույթի վերաբերյալ խոր գիտելիքներ ունեցող Մարքսը և Էնգելսն իրենց հետազոտությունների արդյունքում կարող էին հանգել իրականությունից կտրված եզրահանգումների: Ինչ խոսք, մարքսիզմը ճիշտ էր գնահատում մարդկության պատմության ընթացքը՝ կապված շահագործման, բռնության, արյունահեղ պատերազմների, մարդկանց ազատությունների սահմանափակման

---

62 Տե՛ս Маркс К. и Энгельс Ф., Сочинения, т. 37, М., 1965, էջ 396:

հետ: Սակայն դրանց պատճառների և վերացման ուղիների բացահայտման գործում նրա մոտեցումները պատմության քննությանը չդիմացան: Մարքսի և Էնգելսի նպատակն ազնիվ էր՝ մարդուն փրկել շահագործումից: Սակայն նրանց ներկայացրած քաղաքական լուծումների համակարգը հակաբանական էր, և երբ փորձեցին դա կիրառել, հետևանքները կործանարար եղան:

**Հոլմեի Ի. Աղաջանյան** - գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է տնտեսագիտության տեսության և տնտեսագիտական մտքի պատմության հիմնախնդիրները: Հեղինակ է մենագրությունների, դպրոցական դասագրքի, բուհական ուսումնական ձեռնարկների և շուրջ հիսուն գիտական ու մի շարք հրապարակախոսական հոդվածների:

Summary

**THE PARADOXES OF ECONOMIC DETERMINISM**  
The criticism of Marxist theory of socioeconomic formation

Hovsep I. Aghajanyan

**Key words** - productive forces, production relations, socioeconomic formations, property, basis, superstructure, civilization.

In their theory of socioeconomic formation K. Marx and F. Engels tried to present the patterns of human history. Marxism considered the basis for the change in these formations to be the operation of the law of the interaction of productive forces and production relations. According to this logic, Marx and Engels presented the history of social development as a sequence of the so-called primitive communal, slaveholding, feudal, capitalist and future communist social system. According to Marxism, socio-economic formations are determined by the relationship between the base and the superstructure. A basis is an economic system conditioned by proprietary relations. According to the nature of the basis, a superstructure is formed, i.e. set of political, legal and ideological relations. For this reason, Marxism considers the sphere of spirituality to be derivative with respect to the basis.

In the article it is shown that the Marxist theory of the emergence and transformation of private property and socio-economic formations does not correspond to reality. As a result of the analysis of the socio-economic, political, legal systems of Ancient Rome and Greece, it is substantiated that they were not classical slave-owning states. Marx and Engels explained the socio-economic,

spiritual, cultural, state-political, i.e. contradictory and complex civilization processes from the point of view of class antagonism, the basis of which is the relationship of private property. The thousand-year history of mankind shows that such confrontations are just external manifestations of the underlying processes taking place within society. Moreover, on the basis of private property, internal incentives for human life are built, which, first of all, have spiritual and psychological motives, are manifested in the sphere of material production.

The main events of the history of mankind cannot be separated from the general process of civilization and presented as a controversial theory. Marxism, ignoring the processes of civilization, on the basis of possessive relations built the logic of transformation of the social system, which is conditioned with complex and contradictory institutional relationships. The key to revealing the essence of the transformation of society is the knowledge of the internal logic of civilization processes. Marxist criteria for assessing the nature of the social system do not work, because they are built on false and divorced from reality schemes. For this reason, Marxism did not pass the historical test, as it presented the internal motives of complex social events from the point of view of their external manifestations.

Резюме

## **ПАРАДОКСЫ ЭКОНОМИЧЕСКОГО ДЕТЕРМИНИЗМА**

Критика марксистской теории общественно-экономических формаций

Овсеп И. Агаджанян

Ключевые слова - производительные силы, производственные отношения, общественно-экономическая формация, собственность, базис, надстройка, цивилизация.

К. Маркс и Ф. Энгельс попробовали представить закономерности человеческой истории в своей теории общественно-экономических формаций. Основой изменения этих формаций марксизм считал действие закона взаимодействия производительных сил и производственных отношений. Маркс и Энгельс по этой логике представили историю общественного развития как очередность так называемого первобытно-общинного, рабовладельческого, феодального, капиталистического и будущего коммунистического общественных строев. По марксизму, общественно-экономические формации обусловлены взаимоотношением базиса и надстройки. Базис - это экономический строй, обусловленный собственническими отношениями. Соответственно ха-



9. **Engels' F.**, Ljudvig Fejrbax i konjec klassicheskoj nemeckoj filosofii, Marks K. i Engels' F., «Soch.», t. 21, M., 1961 **(In Russian)**.
10. **Gegel' G.**, Filosofija istorii, «Soch.», t. VIII, M.-L., 1935 **(In Russian)**.
11. **Markova S.**, Ponjatije «feodalizm» v sovremennoj issledovatel'skoj interpretacii /<https://cyberleninka.ru> **(In Russian)**.
12. **Marks K. i Engels' F.**, Soch., t. 37, M., 1965 **(In Russian)**.
13. **Marks K. i Engels' F.**, Soch., t. 42, M., 1972 **(In Russian)**.
14. **Mark's K.**, K'aghak'atntesut'yan k'nnadatut'yan shurj, Karl Mark's yev Fridrih Ėngels, Ėntir yerker 3 hatorov, hat. 1, Yer., 1972 **(In Armenian)**.
15. **Mark's K.**, Kapital, hat. 1, Yer., 1954 **(In Armenian)**.
16. **Ovsjannikov M.**, Filosofija Gegelja, M., 1969 **(In Russian)**.
17. **Pokrovskij I. B.**, Istorija rimskogo prava, M., 1998 **(In Russian)**.
18. **Sarinyan R.**, Tntesagitakan usmunk'neri patmut'yun, Yer., 2005 **(In Armenian)**.